ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի հուլիսի 2-ին կայանալիք մրցույթի հայտարարությունը կարդալ հետևյալ բովանդակությամբ՝

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի մրցույթային հանձնաժողովը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրելու մրցույթ:
Մրցույթը տեղի կունենա 2026թ. հուլիսի 10 -ին՝ ժամը 11:00-ին, ք.Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա 22, Վանաձորի համայնքապետարանի շենքի 4-րդ հարկում, դահլիճում:
ՄՐՑՈՒՅԹԻ ԵՆ ԴՐՎՈՒՄ

Լոտի անվանումը	Հողամասի հասցեն /գտնվելու վայրը/	Կադաստրային ծածկագիրը/ Վկայականի համարը	Մակերեսը/ հա	Վարձավճարի մեկնարկային գինը /սակարկվող/	Հողամասի նպատակային Նշանակությունը /տրման ժամկետը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների՝ ներառյալ սերվիտուտի առկայությունը	Ճանապարհների առկայության մասին տվյալներ	Ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալներ	Շրջակա միջավայրի և պատմամշակութայինհուշարձանների պահպանության, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները
1.ա.1	Գ. Դարպաս	06-033-0230-0046 17042026-06-0088	12,7	տարեկան 3000 դր. 1 հա	Գյուղատնտեսական նշանակության արոտավայր (10 տարի ժամկետով),	չկան	հանդամիջյան	Ըստ նախապես համաձայնեցված հողահատկացման փաստաթղթերի	Պատմամշակութային գոտում չի գտնվում
1.ա.2	Գ. Դարպաս	06-033-0230-0047 21042026-06-2024	16,8	տարեկան 3000 դր/1հա	Գյուղատնտեսական նշանակության արոտավայր (10 տարի ժամկետով),	չկան	հանդամիջյան	Ըստ նախապես համաձայնեցված հողահատկացման փաստաթղթերի	Պատմամշակութային գոտում չի գտնվում
1ա.3	Գ. Շահումյան	06-084-0309-0003 21082020-06-0041	3,95872	տարեկան 4500 դր/1հա	Գյուղատնտեսական նշանակության Վարելահող (10 տարի ժամկետով)	չկան	հանդամիջյան	Ըստ նախապես համաձայնեցված հողահատկացման փաստաթղթերի	Պատմամշակութային գոտում չի գտնվում

Մրցույթի տարեկան վարձավճարի մեկնարկային գները սահմանվում են Վանաձոր համայնքի ավագանու որոշման համաձայն:
Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է մրցութային հանձնաժողով ներկայացնել հայտ, անձը հաստատող փաստաթուղթ՝ անձնագիր և Վանաձորի տեղական գանձապետական բաժանմունքի 900235401453 հաշվարկային հաշվին վճարված 25000 (քսանհինգ հազար) դրամի՝ մրցույթին մասնակցության վճարի մուծման անդորրագիր, իրավաբանական անձինք՝ նաև հիմնադիր և լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև՝ այդ փաստաթղթերի և ղեկավար անձի անձնագրի պատճենները: Մրցույթի մասնակիցները մրցույթին մասնակցելու համար մուծում են նախավճար, որը չի կարող գերազանցել մրցույթի հողամասի նախնական գնի 5 տոկոսը:
Մրցույթում հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը:
Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին մինչև 2026թ. հուլիսի 6-ը, ժամը 18:00: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Վանաձորի համայնքապետարանի մրցութային հանձնաժողով: Հասցե՝ Տիգրան Մեծի պողոտա 22: Հեռ. (0322)4-66-10